ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 ՄԱՐՏԻ 2021թվականի N 41-Ա**

## ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ <<ՏԱՎՈՒՇ>> ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԳՈՀԱՐ ՍՈՒՐԵՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-469-րդ հոդվածներով և հաշվի առնելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի և Տավուշ նոտարական տարածքի նոտարի միջև 2012 թվականի հուլիսի 25-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրում (գրանցված է ՀՀ Ճամբարակ նոտարական տարածքի նոտարի կողմից սեղանամատյանում թիվ՝ 691-ով) կատարելու փոփոխություն.

1)Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Լևոն Բեկի 5 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի նախկինում հատկացված N 14 սենյակի՝ 20 ք.մ մակերեսով, և N 15 սենյակի՝ 19.31 ք.մ մակերեսով, փոխարեն հատկացնել Լևոն Բեկի 5 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի N 19 սենյակը՝ 18,52 ք.մ մակերեսով, և N 18 սենյակից՝ 19,25 ք.մ մակերեսով հատված, 37,77 ք.մ ընդհանուր մակերեսով: Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի մյուս պայմանները թողնել անփոփոխ:

2)Օրենքով սահմանված կարգով կնքել պայմանագրում փոփոխություն կատարելու համաձայնագիր:

2.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարում է Փոխառուն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 ՄԱՐՏԻ 2021թվականի N 42-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՖ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ԼՖ Ծրագիրը, և անհրաժեշտ քայլերը՝այդ Ծրագրին մասնակցելու համար

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով,Բերդ խոշորացված համայնքի հանրային ծառայությունների բարելավում,էներգախնայողության բարձրացում,բիզնես նախագծի իրականացում և գյուղատնտեսության աջակցում:

2.Առաջարկի հաստատման դեպքում կատարել մինչև 75,000,000 ՀՀ դրամի ներդրում՝ՍՆՏԶ ԼՖ ծրագրի պահանջներին համապատասխան:

3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:

4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ;

5.Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 ՄԱՐՏԻ 2021թվականի N 43-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՖ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ԼՖ Ծրագիրը, և անհրաժեշտ քայլերը՝այդ Ծրագրին մասնակցելու համար

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով՝ Մովսես համայնքի խմելու ջրագծի կառուցում:

2.Առաջարկի հաստատման դեպքում կատարել մինչև 6.000.000 ներդրում՝ ՍՆՏԶ ԼՖ Ծրագրի պահանջներին համապատասխան:

3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում;

4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ;

5.Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 ՄԱՐՏԻ 2021թվականի N 44-Ա**

## «ՊԱՌԱՎԱՔԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, Բերդ համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2017 թվականի N 08-Ա որոշմամբ և հաշվի առնելով Պառավաքար գյուղի վարչական տարածքում 24.03.2021թ. տեղի ունեցած լուսումների մասին թիվ 1 արձանագրությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.<<Պառավաքարի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել <<Պառավաքարի Կարեն Մարգարյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝կազմակերպություն/:

2.Կազմակերպության կանոնադրությունում կատարել սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան փոփոխությունները և հաստատել կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել <<Պառավաքարի Կարեն Մարգարյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

/ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

/ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 ՄԱՐՏԻ 2021թվականի N 45-Ա**

## ՀԵՆՐԻԿ ԱՇՈՏԻ ՂԱՐՍԱՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Բերդ համայնքի ավագանու 03 հուլիսի 2020 թվականի N 50-Ա որոշմամբ և հաշվի առնելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Բերդ համայնքի, Այգեձոր գյուղի 1-ին փողոց, 1 հասցեում գտնվող գրադարանի երկրորդ հարկի N 4 սենյակը՝ 16.5 ք.մ մակերեսով, N5 սենյակը՝ 12.4 ք.մ մակերեսով, N6 սենյակը՝ 80.1 ք.մ մակերեսով, N7 սենյակը՝ 8.4ք.մ մակերեսով և N 8 սենյակը՝ 14.8 ք.մ մակերեսով տարածքը, 132,2 ք.մ ընդհանուր մակերեսով, որը առանց մրցույթի, 6 ամիս ժամկետով տրամադրվել է Հենրիկ Աշոտի Ղարսայանին՝ մանկական և ընտանեկան ժամանցի կենտրոն օգտագործելու նպատակով, կնքելու համաձայնագիր և տարածքի անհատույց օգտագործման ժամկետը երկարաձգելու մինչև 2021թվականի հուլիսի 1-ը:

2.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ